

**ԸՆԴՀԱՆՈՒՐ տեղեկություններ**

Նախագիծը մշակված է Երեվան քաղաքի Նենդանաբանական այգու կարանտինի ներքին էլեկտրականության ցանցերի մոնտաժային աշխատանքների համար՝ համաձայն ճարտարապետա-շինարարական լուծումների, բոլոր տեխնիկական առաջադրանքների, պատվիրատուի կողմից տրված առաջադրանքների, և էլեկտրոտեխնիկական կանոնակարգի, NEC (National Electrical Code), СП 31-110-2007 СНИП 67-78-ի հիման վրա:

Նախագծում ընգրկված են ՝

- 1.Ընդհանուր տեղեկությունները:
- 2.Օգտագործված պայմանական նշանների ցանկը:
- 3. էլ. վարդակների, լուսատուների միացման սխեմաները:
- 4. խմբային վահանակների ավտոմատ անջատիչների հասցեավորման աղյուսակները:
- 5. Օգտագործվող էլ. նյութերի մասնագիրը

Ելնելով էլեկտրական բեռնվածքի հաշվարկի համար տրված տվյալներից՝ սնուցող էլ.վահանակների դրվածքային հզորությունը հեռանկարում կկազմի եռաֆազ 10 կՎտ: էլեկտրատներգիայի բաշխումը կատարվում է խմբային էլ. վահանակների (LP) արկղերից, խմբային էլ. վահանակի մեջ տեղադրվում են միաբևեռ,եռաբևեռ ավտոմատ անջատիչները, իողանցման և զրոյական կոնտուրները:

խմբային ցանցերը կառուցվում են պղնձե բազմաջիղ մալուխներով և հաղորդալարերով : Ներքին վարդակային ցանցերը կառուցել 3x4.0մմ, և 3x6.0մմ կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. մալուխների միջոցով:

Ներքին լուսավորության ցանցերը կառուցել 3x1.5մմ, կտրվածքի պղնձե բազմաջիղ էլ. հաղորդալարերի միջոցով: կարանտինը սնող մալուխը անցկացնել ճանապարհ-արահետին կից՝ 0. 7մX0.5մ չափերի խրամուղով:

Վարդակները և անջատիչները տեղադրել հատակից 850մմ բարձրության վրա: խմբային էլ. վահանակը տեղադել հատակից 1500մմ բարձրության վրա: Որպես պաշտպանիչ միջոցներ հարկավոր է կառուցել իողանցման ցանց: Հողանցման ցանցը կառուցել կարանտինի ադմինիստրատիվ շենքի մոտ ըստ հարմարության : Հողանցել նաև կարանտինի և պահակակետի շինությունները :

կարանտինի գլխավոր հատակագիծ